ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/197
25 սեպտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 62-Ա, 63-Ա, 64-Ա որոշումները:

Առդիր՝ 3 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 62-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքով>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքաշինության մասին օրենքով>>, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01,06,2010թ-ի թիվ 186-Ն հրամանով, , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված սուբյեկտների անճշտությունների ուղղման համար Բազում համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-023-0243-0004 ծածկագրի տակ գտնվող 0,17725հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ վարելահողի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 08,04,2004թ-ի թիվ 458-Ն որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 186-Ն հրամանի 2-րդ գլխի կետերով և նշված հողամասի նկատմամբ ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 01.09.2017 թ-ի թիվ 59-Ա որաշումը:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Բազում

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23» Սեպտեմբերի 2017 թվականի N 63

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, Հիմք ընդունելով համայքնի ավագանու 22.09.2017թ. թիվ 48-Ա որոշումը, Անշարժ գույքի նկատամամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072017-06-0021 վկայականը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բազում համայնք 3 փողոց թիվ 93 N 1 հրաձգարան փոստային հասցեում գտնվող և Բազում համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0212-0558 ծածկագրի տակ գտնվող 2.0հա հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը՝ Հանգստի համար նախատեսված/ հողամասն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Վանաձորի Պաշտպանական մարզատեխնիկական հարակական կազմակերպությանը, ռազմատեխնիկական բազմամարտի և գնդակային հրաձգության ուսուցման և մրցումների կազմակերպման նպատակով, որպես հրաձգարան օգտագործելու համար:
2. Հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է անորոշ ժամանակով:
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Վանաձորի Պաշտպանական մարզատեխնիկական հարակական կազմակերպության հետ 10-օրյա ժամկետում կնքել անհատույց օգտագործման իրավունքի տրամադրման պայմանագիր:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 64-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, Պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08/04/2004թ. թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի հոդվածներով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. 286 որոշումով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Բազում համայնքում գտնվող և համաձայն ՀՀ Կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-023-0238-0007 ծածկագրի տակ գտնվող 0.15993 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ 3-րդ կարգի վարելահողի նկատմամբ ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ